Ռեզիդենտ/ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ հաճախորդների հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր[1]

N	Փաստաթղթի անվանումը
1.	ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից քաղվածք/գրանցման վկայական, Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն) (չի պահանջվում, եթե ներառված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրից քաղվածքում)
1.1	Իրավաբանական անձի գրանցման երկրի օրենսդրության համաձայն, կազմակերպաիրավական կարգավիճակը սահմանող համապատասխան պետական մարմնի կողմից տրված գրանցման վկայական (սերտիֆիկատի կամ այլ փաստաթղթի), հիմնադիր փաստաթուղթ (կանոնադրություն, հիմնադրման և/կամ գործունեության մասին պայմանագիր, կամ այլ փաստաթուղթ)[2]
1.2	Իրավաբանական անձի ղեկավար մարմնի որոշումը/լիազորագիրը՝ համապատասխան անձանց (այսուհետ՝ հաշվի կարգադրիչներ) հաշվով գործարքներ կատարելու իրավունք տալու մասին[2]
1.3	Իրավաբանական անձի գրանցման երկրի համապատասխան մարմնի կողմից տրված իրավաբանական անձի հարկային մարմիններում հաշվառման վերաբերյալ փաստաթուղթ [2]
1.4.	Իրավաբանական անձի գրանցման երկրի համապատասխան իրավասու մարմնի կամ գործակալի կողմից տրված փաստաթուղթ, որում արտացոլված կլինեն իրավաբանական անձի ղեկավարի տվյալները[2]
2.	Կանոնադրություն
3.	Բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ բաժնետերերի/մասնակիցների ռեեստրը (կազմը) պարունակող փաստաթուղթ
4.	Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի (գործադիր մարմինը Ընկերություն լինելու դեպքում՝ տվյալ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի, ինչպես նաև հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց (լիազորված անձինք, հաշվի կարգադրիչներ և այլն) անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր, անհրաժեշտության դեպքում՝ Գործադիր մարմնի ղեկավարի և հաշվի այլ կարգադրիչների պաշտոնների նշանակման հրամանները կամ որոշումները
5.	Ընկերության կանոնադրական կապիտալում 10% և ավելի բաժնեմաս (բաժետոմս) ունեցող՝ ✓ ֆիզիկական անձ մասնակիցների/բաժնետերերի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, ✓ Իրավաբանական անձ մասնակիցների/բաժնետերերի դեպքում՝ պետական ռեգիստրից քաղվածք/գրանցման վկայական, կանոնադրություն, ՀՎՀՀ,, բաժնետիրական ընկերությունների դեպքում նաև՝ մասնակիցների/բաժնետերերի ռեեստրը (կազմը) պարունակող փաստաթուղթ
6.	ԱՄՆ հարկատուների վերաբերյալ W-9 տեղեկանքի ձև կամ ԱՄՆ ոչ հարկատուների

	իրավաբանական անձանց վերաբերյալ W-8BENE տեղեկանքի ձև[3]
7	Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր՝ ✓ Հաշվի կարգադրիչների ստորագրության և հաճախորդի կնիքի դրոշմի նմուշների՝ քարտ, ✓ Հաշվի բացման դիմում-պայմանագիր, Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման հարցաթերթ (KYC)
8.	Բանկի հայեցողությամբ՝ այլ փաստաթղթեր

[1] Հաճախորդի կողմից փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակ փաստաթղթերի տեսքով կամ էլեկտրոնային/սկանավորված տարբերակով, եթե բանկը հնարավորություն չունի ինքնուրույն ձեռք բերելու նշված փաստաթղթերը:
[2] Կիրառելի է միայն ոչ ռեզիդենտ հաճախորդների դեպքում:
[3] Փաստաթուղթը պահանջվում է միայն ԱՄՆ նախանշան ունեցող հաճախորդի դեպքում:

Անհատ ձեռներեց հաճախորդների հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր[1]

N	Փաստաթղթի անվանումը
1.	Անձը հաստատող փաստաթուղթ (Հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՆՔ-ի դեպքում կարող է չներկայացնել))
2.	✓ Պետական ռեգիստրի վկայական (բացակայության դեպքում՝քաղվածք գրանցամատյանից, տրված պետական ռեգիստրի կողմից (կիրառելի չէ նոտարի դեպքում)), ՀՎՀՀ, եթե ներառված չէ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից քաղվածքում, Նոտարի դեպքում՝ նաև նոտարի ծառայողական վկայական և (կամ) նշանակման հրաման
3.	ԱՄՆ հարկատուների վերաբերյալ W-9 տեղեկանքի ձև կամ ԱՄՆ ոչ հարկատուների իրավաբանական անձանց վերաբերյալ W-8BEN տեղեկանքի ձև[2]
4.	Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր՝ ✓ Հաշվի կարգադրիչների ստորագրության և հաճախորդի կնիքի դրոշմի նմուշների՝ քարտ, ✓ Հաշվի բացման դիմում-պայմանագիր, ✓ Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման հարցաթերթ (KYC)
5.	Բանկի հայեցողությամբ՝ այլ փաստաթղթեր

[1] Հաճախորդի կողմից փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակ փաստաթղթերի տեսքով կամ էլեկտրոնային/ սկանավորված տարբերակով, եթե բանկը հնարավորություն չունի ինքնուրույն ձեռք բերելու նշված փաստաթղթերը:

[2] Փաստաթուղթը պահանջվում է միայն ԱՄՆ նախանշան ունեցող հաճախորդի դեպքում: